



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 08 » օգոստոսի 2024թ. N^o 799

ԲԱՎԱԿԱՆ ՍԱՆԱՍԱՐԻ ՄԵԼՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 20-ի թիվ 18-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի օգոստոսի 20-ի թիվ 106 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 42 օրդերը և Բավական Սանասարի Մելոյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19022024-06-0042 վկայական՝ տրված 19.02.2024 թվականին) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Շ. Թորոսյան փողոց, 3 շենք, 6 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Բավական Սանասարի Մելոյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

- 1) Մելոյան Բավական Սանասարի - ինքը՝ ծնված 03.04.1953 թվականին,
- 2) Ջուլիակյան Արամ Նորիկի - տղան՝ ծնված 06.11.1978 թվականին,
- 3) Կոչկակարյան Սվետլանա Գրիշայի - հարսը՝ ծնված 17.12.1980 թվականին
- 4) Ջուլիակյան Նաիրա Արամի - թոռը՝ ծնված 27.12.2001 թվականին,
- 5) Ջուլիակյան Նորիկ Արամի - թոռը՝ ծնված 14.04.2003 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



[Handwritten signature]

Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ